**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

| **Առարկության, առաջարկության հեղինակը** | **Առարկության, առաջարկության բովանդակությունը** | **Եզրակացություն** | **Կատարված փոփոխություններ** |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Գլխավոր դատախազություն 2018-05-16 թիվ 04/4047-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| ՀՀ Կենտրոնական բանկ 2018-05-14 թիվ 15.1-06/000280-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Ֆինանսների նախարարություն 2018-05-08 թիվ 01/11-1/8289-18 գրություն | Նախագծի 5-րդ և 36-րդ կետերով նախատեսվում է համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի օգոստոսի 25-ի թիվ 525 և | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | |
|---|---|---|---|
| | Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 594-Ն որոշումներում:<br>Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք, որ վերոնշյալ որոշումներով սահմանված հարաբերությունները կարգավորված են 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքով: Այս առումով, արդեն իսկ, մշակվել և շրջանառվում է ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ, որով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 1998 թվականի օգոստոսի 25-ի թիվ 525 և ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի թիվ 594-Ն որոշումները:<br>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք որոշման նախագծից հանել նախագծի 5-րդ և 36-րդ կետերը: | | |
| Պետական եկամուտների կոմիտե 2018-05-08 թիվ 01/3-4/23482-18 գրություն | Նախագծից հանել 5-րդ և 36-րդ կետերը, քանի որ այդ կետերում նշված որոշումներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ ԿԱ ՊԵԿ 10.04.2017թ. N01/3-1/18474-18 գրությամբ | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | |
|---|---|---|---|
| | ներկայացվել է պետական իրավական փորձաքննության | | |
| Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին 2018-05-07 թիվ 01/15.2/2779-18 գրություն | Նախագծի 31-րդ կետը հանել ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ փորձարկման լաբորատորիայի արձանագրությունը հանդիսանում է անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթուղթ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն որոշման 27-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ներմուծող երկրի պահանջի դեպքում՝ արտահանողը ներկայացնում է տվյալ բեռի խմբաքանակի անվտանգությունը հավաստող լաբորատոր փորձարկման արձանագրությունը: | Ընդունվել է | Նախագծից հանվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-իN 1142-Ն որոշումը |
| Ոստիկանություն 2018-05-07 թիվ 01.6/24/499851-18գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Ազգային անվտանգության ծառայություն 2018-05-05 թիվ | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |

| | | | |
|---|---|---|---|
| 11/414 գրություն | | | |
| Արտաքին գործերի նախարարություն 2018-05-07 թիվ 1111/4606-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Կրթության և գիտության նախարարություն 2018-05-07 թիվ 01/10/4975-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Քաղաքացիական ավիացիայի կոմիտե 2018-05-07 թիվ 1.1/10.1/960-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Արտակարգ իրավիճակների նախարարություն 2018-05-05 թիվ 1/06/1/5301-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն 2018-05-05 թիվ 02/09.1/3360-18 գրություն | 1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 31-ի «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման կարգի հաստատման մասին» N 351 որոշման՝ 24-րդ կետի «ը)» ենթակետից հանել «՝վավերացված ռեեստր վարողի կնիքով:» բառերը: | Չի ընդունվել | Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի 31 հոկտեմբերի N 351 որոշմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեղեկությունները ռեեստր վարողի կողմից տրվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարություններին, գերատեսչություններին, իրավապահ և դատական |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մարմիններին, լիազորված պետական կառավարման մարմնին, եթե վերջիններս դիմում են ռեեստր վարողին՝ միայն իրենց գործառնությունների իրականացման նպատակով, իսկ Նախագծով փոփոխվում են իրավական ակտերում իրավաբանական անձանց կնիքի պահանջ պարունակող դրույթները՝ գործարար շրջանառության մեջ իրավաբանական անձանց գրանցման փուլում վերջիններիս կողմից կնիքի ձեռքբերման համար գումարային և ժամանակային կորուստ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | չունենալու համար: |
| | 2. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 6-ի «Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ պետական գույքի մասնավորեցման նպատակով բացվող հաշվի վարման, վճարումների իրականացման, վճարված գումարների վերադարձման և հաշվառման կարգը հաստատելու մասին» N 275 որոշման՝<br>1) 10-րդ կետի 2-րդ պարբերությունից հանել «՝ հաստատված կլոր կնիքով:» | Չի ընդունվել | 10-րդ կետի 2-րդ պարբերությունում սեփականաշնորհման նախարարության կնիքի մասին է խոսքը, իսկ Նախագծով փոփոխվում են իրավական ակտերում իրավաբանական անձանց կնիքի պահանջ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պարունակող դրույթները՝ գործարար շրջանառության մեջ իրավաբանական անձանց գրանցման փուլում վերջիններիս կողմից կնիքի ձեռքբերման համար գումարային և ժամանակային կորուստ չունենալու համար: |
| | 2) 11-րդ կետի «բ)» ենթակետից հանել «կնքված ընկերության (ձեռնարկության) կնիքով և» բառերը: | Ընդունվել է, | Կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| | 3) 11-րդ կետի 6-րդ պարբերությունում հանել «և վավերացվում բանկի կամ մասնաճյուղի համապատասխան կնիքով:» բառերը: | Չի ընդունվել, | Խոսքը բանկի կնիքի մասին է, իսկ Նախագծով փոփոխվում են իրավական ակտերում իրավաբանական անձանց կնիքի պահանջ պարունակող դրույթները՝ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գործարար շրջանառության մեջ իրավաբանական անձանց գրանցման փուլում վերջիններիս կողմից կնիքի ձեռքբերման համար գումարային և ժամանակային կորուստ չունենալու համար: |
| | Որոշմամբ հաստատված N 1, N 3 և N 9 ձևերում հանել «Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է | Կատարվել են համապատասխան փոփոխություններ |

| | | | |
|---|---|---|---|
| | 3. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 6-ի «Ուղղակի վաճառքի ձևով պետական գույքի մասնավորեցման կարգը հաստատելու մասին» N 277 որոշման բոլոր ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է ի գիտություն | Նախագծից հանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 6-ի N 277 որոշումը |
| | 4. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 8-ի «Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ձևով պետական գույքի մասնավորեցման կարգը հաստատելու մասին» N 278 որոշման հաստատված ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է | Կատարվել է համպատասխան փոփոխություն |
| | 5. Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետությունում արժեթղթերի, դրանց թողարկման ազդագրերի պետական գրանցման և արժեթղթեր թողարկողների կողմից արժեթղթերի շուկայի կարգավորում և վերահսկում իրականացնող լիազորված | Ընդունվել է ի գիտություն | Նախագծից հանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 10-ի N 140 որոշումը |

| | | | |
|---|---|---|---|
| | պետական մարմին տեղեկությունները ներկայացվելու և հրապարակվելու կարգը հաստատելու մասին» N 140 որոշման՝<br>1) 25-րդ «ե» ենթակետից հանել «կնիքը» բառը: | | |
| | 6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» N 581 որոշման ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է մասնակի | Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 581 որոշման Ձև 1-ից, Ձև 2-ից և N 3 Ձևից հանվել են «Կ.Տ.» բառերը, պետական մարմինների կնիքներին անդրադարձ չի կատարվել, քանի որ Նախագծով փոփոխվում են իրավական ակտերում իրավաբանական անձանց կնիքի պահանջ պարունակող դրույթները՝ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գործարար շրջանառության մեջ իրավաբանական անձանց գրանցման փուլում վերջիններիս կողմից կնիքի ձեռքբերման համար գումարային և ժամանակային կորուստ չունենալու համար: |
| | 7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» N 762 որոշման ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է մասնակի | Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման N 2 Ձևի 2-րդ կետի հայտատու պարբերությունից հանվել են «Կ.Տ.» բառերը, պետական մարմինների կնիքներին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | անդրադարձ չի կատարվել, քանի որ Նախագծով փոփոխվում են իրավական ակտերում իրավաբանական անձանց կնիքի պահանջ պարունակող դրույթները՝ գործարար շրջանառության մեջ իրավաբանական անձանց գրանցման փուլում վերջիններիս կողմից կնիքի ձեռքբերման համար գումարային և ժամանակային կորուստ չունենալու համար: |

| | | | |
|---|---|---|---|
| | 8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գեոդեզիական կետերի պահպանության կարգը հաստատելու մասին» N 1134 որոշմամբ հաստատված ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |
| | 9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 27-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր զննության, և բժշկական զննության ծավալի ու հաճախականության ցանկը, անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի, բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը, անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին որոշման ձևերը հաստատելու մասին» N 347-Ն որոշման՝<br>1) 9-րդ կետի 1-ին ենթակետից հանել «եթե զննումը, հետազոտությունը կատարվում են | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | |
|---|---|---|---|
| | այլ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում, ապա վերջինիս արդյունքները հաստատվում են զննումը (հետազոտությունը) կատարող իրավաբանական անձի կնիքով» բառերը:<br>2) 18-րդ կետում հանել «Նշումն ամրագրվում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կլոր կնիքով:» նախադասությունը: | | |
| | 10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերից դեպի ընդհանուր օգտագործման երկաթուղային գծեր և հակառակը երկաթուղային շարժակազմի գծանցման կարգը սահմանելու մասին» N 1483-Ն որոշմամբ հաստատված ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է | Կատարվել է համպատասխան փոփոխություն |
| | 11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի «Կենդանի դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հնարավորության մասին եզրակացություն տալու կարգը սահմանելու մասին» N 132-Ն որոշմամբ | Ընդունվել է | Կատարվել է համպատասխան փոփոխություն |

| | | | |
|---|---|---|---|
| | հաստատված ձևից հանել «Կ.Տ.» նշագրումը: | | |
| | 12. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի «Փոխպատվաստման անհրաժեշտության մասին բժշկական եզրակացություն տալու կարգը սահմանելու մասին» N 131-Ն որոշման ձևից հանել “Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |
| | 13. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի «Վարորդի սթափության վիճակի զննության կարգը, այդ զննության արձանագրության և գրանցման մատյանի ձևերը հաստատելու մասին» N 277-Ն որոշման ձևից հանել “Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |
| | 14. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության, | Չի ընդունվել | Նշված կետերում խոսքը լիցենզավորող պետական մարմնի կնիքի մասին է, իսկ Նախագծով փոփոխվում են իրավական ակտերում |

| | | | |
|---|---|---|---|
| | արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի իրականացման լիցենզավորման կարգերը և այդ գործունեությունների իրականացման լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 281-Ն որոշման՝<br>1) N 1 և N 3 հավելվածների 6-րդ կետերից հանել «և այդ մարմնի՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիքով:» բառերը:<br>2) 1-ին և 2-րդ ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումները: | | իրավաբանական անձանց կնիքի պահանջ պարունակող դրույթները՝ գործարար շրջանառության մեջ իրավաբանական անձանց գրանցման փուլում վերջիններիս կողմից կնիքի ձեռքբերման համար գումարային և ժամանակային կորուստ չունենալու համար: |
| | 15. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի «Փոխպատվաստման օրգաններ (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները և փոխպատվաստումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» N 1260-Ն որոշման ձևերից հանել «Կ.Տ» նշագրումները: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | |
|---|---|---|---|
| | 16. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի «Դիակից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու թույլտվության կարգը և պայմանները հաստատելու մասին» N 1495-Ն որոշման ձևերից հանել «Կ.Տ» նշագրումները: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |
| | 17. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին N 1024-Ն որոշման ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումները: | Չի ընդունվել | «Կ.Տ.» նշագրումը վերաբերում է հարկային տեսչության կնիքին, իսկ Նախագծով փոփոխվում են իրավական ակտերում իրավաբանական անձանց կնիքի պահանջ պարունակող դրույթները՝ գործարար շրջանառության մեջ իրավաբանական անձանց գրանցման փուլում վերջիններիս կողմից կնիքի ձեռքբերման համար գումարային և ժամանակային կորուստ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | չունենալու համար: |
| | 18. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի «Ազգային գրադարանային հավաքածուի հաշվառման, պահպանության, վերականգնման և օգտագործման կարգը սահմանելու մասին» N 1448-Ն որոշման ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումները: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |
| | 19. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումները: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | |
|---|---|---|---|
| | 20. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին N 1024-Ն որոշման ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |
| | 21. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի «Գործընկեր հասարակական կազմակերպությունների ընտրության կարգը, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ընտրության կարգը սահմանելու մասին» N 851-Ն որոշման N 851-Ն որոշման N 2 հավելվածի՝<br>1) 11-րդ կետից հանել «և կնիքով (կնիքի առկայության դեպքում)» բառերը.<br>2) 12-րդ կետից հանել «և (կամ) կնքված (կնիքի առկայության դեպքում)» բառերը: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | |
|---|---|---|---|
| | 22. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը հաստատելու մասին» N 1078-Ն որոշման՝<br>1) 32-րդ կետից հանել «և լիազորած մարմնի՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիքով:» բառերը:<br>2) Որոշման ձևից հանել «Կ.Տ.» նշագրումը: | Չի ընդունվել | Պետական մարմնի կնիքի մասին է խոսքը, իսկ Նախագծով փոփոխվում են իրավական ակտերում իրավաբանական անձանց կնիքի պահանջ պարունակող դրույթները՝ գործարար շրջանառության մեջ իրավաբանական անձանց գրանցման փուլում վերջիններիս կողմից կնիքի ձեռքբերման համար գումարային և ժամանակային կորուստ չունենալու համար: |

| | | | |
|---|---|---|---|
| | 23. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Պեստիցիդների ու ագրոքիմիկատների փորձաքննության անցկացման կարգը և պեստիցիդների ու ագրոքիմիկատների ներմուծման և արտահանման մասին եզրակացության ձևերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության «2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 1151-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1192-Ն որոշման ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումները: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |
| | 24. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի «Մանուկներին և վաղ տարիքի երեխաներին կրծքով կերակրումը խրախուսելու ազգային ծրագրով նախատեսված մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերի համաձայնեցման և լիազորման կարգը սահմանելու մասին» N 326-Ն որոշման N 1 ձևից հանել «Կ.Տ.» նշագրումը: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | |
|---|---|---|---|
| | 25. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, հետգնման, շրջանառության և մարման կարգը, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, հետգնման և մարման կարգը, գանձապետական պահառուի գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1580-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի N 1606-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին N 381-Ն որոշման՝<br>1) N 3 հավելվածի 26-րդ կետից հանել «և կնքում գանձապետական պահառուի սպասարկման կետի կնիքով:» բառերը:<br>2) որոշման ձևերից հանել «Կ.Տ.» | Ընդունվել է ի գիտություն | Նախագծից հանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 381-Ն որոշումը |

| | | | |
|---|---|---|---|
| | նշագրումները: | | |
| | 26. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի գրանցման և դրամարկղային գրքի վարման կարգը, ինչպես նաև առհաշիվ տրված կանխիկ դրամով գումարների նկատմամբ ժամկետային սահմանափակումները սահմանելու մասին» N 1260-Ն որոշման ձևերից հանել «Կ.Տ.» նշագրումները: | Ընդունվել է | Կատարվել են համապատասխան փոփոխություններ |
| | 27. Նախագծում ներառել նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N 2081-Ն որոշման կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարություն 2003 թվականի ապրիլի 23-ի N 505-Ն, «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, հայաստանի հանրապետության տարածքով դրանց | Չի ընդունվել | Թվարկված իրավական ակտերում նշված պետական կնիքի մասին գրառումները առնչություն չունեն իրավանական անձանց գործարար շրջանառության ոլորտին, իսկ Նախագծով |

| | | | |
|---|---|---|---|
| | տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր մարմին ճանաչելու, երկակի նշանակության ապրանքների արտահանման, հայաստանի հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման թույլտվության տրամադրումն այլ շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցնելու կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 19-ի N 212-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 765-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 1-ի N 924-Ն որոշումը, «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների | | փոփոխվում են իրավական ակտերում իրավաբանական անձանց կնիքի պահանջ պարունակող դրույթները՝ գործարար շրջանառության մեջ իրավաբանական անձանց գրանցման փուլում վերջիններիս կողմից կնիքի ձեռքբերման համար գումարային և ժամանակային կորուստ չունենալու համար: |

| | | | |
|---|---|---|---|
| | որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշումը, «Վերջնական օգտագործողի հավաստագրի պետական հաստատման, ներմուծման հավաստագրի տրամադրման կարգերը և հավաստագրերի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 706-Ն որոշումը, «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող սարքավորումների փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի  N 785-Ն որոշումը, հավատարմագրման վկայագրի ձևը, Ֆիզիկական անձի համապատասխանության սերտիֆիկատի ձևը, Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատի ձևերը, արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի ձևը, ծառայության(ների) համապատասխանության սերտիֆիկատի ձևը, մինչհավատարմագրման պայմանագրի | | |

| | | | |
|---|---|---|---|
| | օրինակելի ձևը, հավատարմագրման պայմանագրի օրինակելի ձևը, հավատարմագրման պայմանագրի (վերապահումով) օրինակելի ձևը, նախնական այցի պայմանագրի օրինակելի ձևը: | | |
| ՀՀ մշակույթի նախարարություն<br>2018-05-05 թիվ 05/5.1/2700-18<br>գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Պետական գույքի կառավարման<br>կոմիտե<br>2018-05-05 թիվ<br>01/13.23/3042-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Անշարժ գույքի կադաստրի<br>կոմիտե<br>2018-05-05<br>թիվ ՄU/2661-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Տարածքային կառավարման և<br>զարգացման նախարարություն<br>2018-05-05 թիվ<br>01/16.1/2702-18<br>գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |

| | | | |
|---|---|---|---|
| Տրանսպորտի,կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն 2018-05-05 թիվ 01/16.1/7926-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն 2018-05-05 թիվ 1/12/601-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Գյուղատնտեսության նախարարություն 2018-05-04 թիվ ԻԱ/ԳԱ-1/4052-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |

| | | | |
|---|---|---|---|
| Բնապահպանության նախարարություն 2018-05-04 թիվ 1/04.3/10910-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն 2018-05-04 թիվ 05/13.2/2267-18 գրություն | Նախագծի՝<br>1. 1-ին կետով առաջարկվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 31-ի «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման կարգի հաստատման մասին» №351 որոշման 14-րդ կետի 15-18-րդ պարբերությունները բացակայում են: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն |

| | | | |
|---|---|---|---|
| | 2. 1-11-րդ կետերում «որոշման» բառը փոխարինել «որոշմամբ հաստատված հավելվածի» բառերով: | . Ընդունվել | Կատարվել է համապատասխան փոփոխություն |
| Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2018-05-04 թիվ ԱԱ/ԺՍ-1-3/4503-18 գրություն | Հանել 37-րդ կետը, քանի որ այն կրկնում է 27-րդ կետով առաջարկվող փոփոխությունը: | Ընդունվել է | Կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| Առողջապահության նախարարություն 2018-05-03 թիվ ԼԱ/06.1/5058-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |

| | | | |
|---|---|---|---|
| Սփյուռքի նախարարություն 2018-05-03 թիվ 01/16.1/829-18 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |
| Պաշտպանության նախարարություն 2018-05-22 թիվ ՊՆ/510-692 գրություն | Առաջարկություններ և դիտողություններ չկան: | | |